

# ԾԱՂԻԿ

## ՄԱԿԱՆՑ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

### Դաստիարակութեան եւ կրթութեան

ԾԱՂԻԿ ՄԱԿԱՆՑը կը նրատարակուի ամէն ուրբար օր, ի բաց առեալ ջունիսի եւ ջուլիս ամիսները՝ բաժանողազինքն է կը նիտիկ, Պօլսոյ եւ գաւառաց համար, տասնամսեայ 50 դինեկն. հինգամսեայ 25 դինեկն, երկու եւ կիսամսեայ 45 դամեկան. Այլ երկաց համար 42 ժենք. Խւրախնչիւր թիւր կ'արժէ 50 փարս. Գաւառներէն դրումսրուղը ալ կ'ընդունուի. Բաժանողազրութեան համար դիմել առ Տնօրեն—Խմբագիր Միհրան Ասկանազ, իսկի Զապահէ հատտէսի թիւ 61, Նշան Կ. Պէրաբեանի տպարանը:

### ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

— — — — —

Ը Ն Թ Ա Յ Ք

ՃՐՄԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼՉՈԲԱՆՈՒԹԵԱՆ<sup>(1)</sup>

—

Պ. ՄԱՄԲՐԵՒ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Առ ԱՇՋԿԵՐԾԾ ԻՒՐ՝ Պօղոս ԵՒ ՅՈՎՃԱՆՆԵՍ

Դ. Նախադասուրիւն. — Ժամանակի բաժանումն.

Պ. Մամբրէ. — Պօղոս, գնա՞ գրատախ- տակին առջև և գրէ՞ նախադասութիւն մը:

Պօղոս (մէկ ձեռքով կաւիճը բռնած՝ միւ- սովը գլուխը քերելով). — Զե՞մ կրնար, Պարո՞ն:

Պ. Մամբրէ. — Բայց հիմայ սլիտի տես- նես որ կրնաս: Երկինքը նայէ՞, ի՞նչ գոյն ունի:

Պօղոս. — Կապոյս է:

Պ. Մամբրէ: — Պրէ՞ ուրեմն. Երկինքը կապոյտ է: — Եղած տեղէդ լաւ կը տես-

նե՞ս մեր գրացի երկաթագործին ծխանն.

Ի՞նչ կ'ընէ այս վայրկենին:

Պօղոս. — Կը ծխայ:

Պ. Մամբրէ. — Լա՞ւ, գրէ՞ առանց իմ թելադրութեան:

Պօղոս (գրելով). — Երկաթագործին ծխանը կը ծխայ:

Պ. Մամբրէ. — Իսկ երկաթագործը. կը տեսնե՞ս զայն: Գրէ՞ թէ անիկա՞ ինչ կ'ընէ:

Պօղոս (գրելով). — Երկաթագործը կը ծեծէ իւր սալը:

Պ. Մամբրէ. — Լա՞ւ. ի՞նչ կ'անուանես այդ գրածդ:

Պօղոս (կարող մարդու մը կերպարան-քով). — Նախադասութիւններ են այս գրածներս:

Պ. Մամբրէ. — Բայց սկսոք է որ լաւ հասկնաս թէ ի՞նչ է այդ ըրածդ: — Քե- րականական վերլուծութիւնը քեզի սով- րեցուց նախադասութիւնն մը տարբաղա- դըել կամ կազմալուծել՝ գտնելով անոր են- թակայն, բայն, ստորոգելին կամ խնդիրն. իսկ հիմայ, վայսանակ ուրիշի մը գրած նախադասութիւնները կազմալուծելու, դո՞ւ ինքնին կազմեցիր նախադասութիւն- ներ: Գրած նախադասութեանցդ բայերը

(1) Տես թիւ 17

սահմանական եղանակի ներկայ են. կրնա՞ս փոխել անոնց ժամանակը: կը յիշես երէկուան փոթորիկն. ըսէ՛ թէ ի՞նչպիսի էր երկինքը:

Պօլոս (գըելով). — Երէկ երկինքը մը-թին էր (անցեալ ժամանակ):

Պ. Մամբրէ. — Վաղն ի՞նչ պիտի ընէ դարձեալ մեր երկաթագործը:

Պօլոս (գըելով). Վաղն երկաթագործն պիտի ծեծէ իւր սալը (ապո. ժմկ):

Հետևեալ հրահանգաց մէջ բային ժամանակը ներկայ է, անցեա՞լ է թէ ապառնի:

#### ՀՐԱՀԱՆԳ 1.

Ուղղեալ. — 1. Ես խելօք եմ (ի՞նչ ժմկ). (ներկայ). Երէկ խելօք եղայ (անցեալ). Վաղը խելօք պիտի ըլլամ (ապառնի): — 2. Մայրիկ, դու բարի ես (ներկ). Դու միշտ բարի եղած ես (անց.), և միշտ բարի պիտի ըլլամ (ապառ.): — 3. Մարտի մէջ ցորենները կանաչ են (ներկ). Յուլիսի մէջ դեղին պիտի ըլլամ (ապո.): — 4. Անցեալ տարի կեռն ծոյլ էր (անց). այս տարի աշխատասէր է (ներկ). ալարդեւարաշխութեան օրը պիտի վարձատրուի (ապառ.): — 5. Հիմայ տղայ եմ ես (ներկ). ուժ տարիէն չափահաս պիտի ըլլամ (ապո.):

#### ՀՐԱՀԱՆԳ 2.

Ուղղեալ. — 1. Աղօրիքին թևերը կը դառնան (ներկ). Երէկ կը դառնային (անց.). արդէն երկար ատեն դարձած են (անց.). դեռ երկար ատեն պիտի դառնան (ապո.): — 2. Այսօր, չաբաթ, կ'աշխատիմ (ներկ.). Երէկ, ուրբաթ, աշխախատեցայ (անց.). բայց վաղը, կիւրակէ, պիտի հանգչիմ (ապառ.): — 3. Երէկ անձրև կուգար (անց.). այսօր ալ անձրև կուգայ (ներկ.). վաղը թերկս արեգակը պիտի փայլի (ապո.): — 4. Անցեալ աշուն ծիծառները մեկնեցան (անց.). հիմայ որ գարուն է՝ կը վերագունան (ներկ.): յառաջիկայ աշուն նորէն պիտի մեկնին (ապո.):

#### ՀՐԱՀԱՆԳ 3.

Ուղղեալ. — 1. Դասս կը սովորիմ (ներկ). Երէկ դասս կը սովորէի (անց). Վաղը դասս պիտի սովորիմ (ապո.): — 2. Կը սիրեմ իմ եղբայրներս (ներկ.). չատ վաղտիկ եղած ատենս ալ կը սիրէի եղբայրներս (անց.).

Բոլոր վկենացս մէջ պիտի սիրեմ իմ եղբայրներու (ապո.): — 3. Վաղեմի ժամանցայը կը հնչէ ժամերը (ներկ). արդէն երկար. ատեն հնչած է (անց). տակաւին երկար ատեն պիտի հնչէ (ապո.): — 4. Երէկ որմնադիրները քարեր բերին (անց). այսօր չաղախ կը շինեն (ներկ). Վաղը պիտի հիւսեն պատը (ապո.):

Փոխեց ի Հայ

ՆՉԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Մալկարա

Ի. Գառէ և Լ. Մոյ

(Շարունակելի)

## ՄԻԶԻՆ ԸՆԹԱՑՔ

### ԸՆԹԱՑՔ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ԳԻՆԻ ԵԿ ՋՈՒ ՋՈՒ

ՅԱՏԱԿԱԳԻՒԾ

Գինին կեղծ կարեկցութիւն մը կը յայտնէ ջրոյ. միակ արժանիքն զոր գինին կը շնորհէ նմա: — Պատախան ջրոյ: — Գինին ընդդէմ կը պատախանէ. կը ջատագովէ ինքզիքը. իւր հնութիւնը, իւր հայրենիքը: — Կը յիշէ Բագոսի մատուցուած մեծարանքներն. իւր ընթացքն Ասիայէն յեւրոպա. իւր ծննդավայրն: — Գինւոյն ներկայութիւնը ի տօնս, ի խնջոյս: — Այն վայրերը յորս կ'ընդունին զինքը. ինչ որ կը պաշտի իւրեան բանաստեղծն: — Գինին եւ գործաւորը. օգտակարութիւնն զոր ունի գինին հիւանդին, մանկան, ծերունոյն: — Վաճառականութիւնն որոյ առարկայն է. աղքիւր է դիւրակեցութեան եւ հարստութեան: — Եզրակացութիւն:

Զրոյն պատախանը: — Կը հերքէ գինւոյն բոլոր փաստերը կամ գոնէ կը տկարացնէ զայնս: — Յաղթութիւնն ջրոյ:

#### ՀՆԴԱՑՑԱՑՈՒՄՆ

« Աւա՛ղ, քանիօն արգահատելի է վիճակը. կ'ըսէր օր մը Գինին Զրոյ. բնութիւնը ո՛քափ անիրաւ վարուած է քեզ նկատմամբ. չէ՛ տուած քեզ ոչ այն ձոխ գոյնը, ոչ այն հեշտահամ ձաշակը և ոչ այն կազդուրիչ զօրութիւնը որք սիրելի և պանծալի կ'ընեն զիս համօրէն աշխարհի մէջ:

Դու , յաճախ անարգեալ և խոտան , եղբայր իմ հէդ , չունիս ուրիշ արժանիք բայց մի-  
այն ճանչնալ զքեզ խոնարհագոյն քան զիս :

— Ինձ թուի թէ , եղբայր իմ , պատաս-  
խանեց Զուրը , սակաւիկ մի յանձնապատան  
ժպրհութեամբ կը խօսիս . ինչ որ ալ ըլլայ  
քու արժանիքդ որով կը մեծարուիս մար-  
դոցմէ , իմս կը հաւասարի նմա , եթէ չգե-  
րազանցեր զայն :

— Ոչինչ մը ըլլալու վիշտը , մինչ ամե-  
նայն ինչ եմ ես , կրնայ այդ աստիճան չա-  
րաչար դասել տալ քեզ , չարունակեց Դի-  
նին , բայց ունկնդիր եղիր ինձ և պիտի  
հասկնաս սիսալդ :

« Իմ գոյութիւնը կ'սկսի զյուգ ընդ գո-  
յութեան մարդկային ազգի , և նորա որո-  
րանն եղաւ իմ հայրենիքն : Առաջին մար-  
դիկ , թէպէտ և տգէտ , ի միտ առին իմ  
կարողութիւնն . աստուածացուցին զիս եւ  
կանգնեցին ինձ բագիններ :

« Յետոյ հետեւեցայ քաղաքակրթութեան  
և աշխարհակալցա : Նոխ Փիւնիկեցիք տա-  
րին զիս Միջերկրականի ափանց վրայ և նո-  
րա բազում կոզեաց մէջ . Արշավեղագոսի  
կղզիներն և Խոայիոյ արգաւանդ երկիրներն  
ծածկուեցան արագ արագ այն զարմանալի  
տնկովն որ զիս կ'արտադրէ , և , զայն ստա-  
նալու համար , կոլուացիք գային տիրեցին  
Բօյի երկու ափանց : Խոայիայէն անցայ ի  
Գաղլիա , յետոյ յայլ երկիրներ , ապա յԱմե-  
րիկա և յՈվկիանիա : Բայց եթէ կ'ուզես  
գիտնալ բուն ծննդավայրս , գնա ամպաճեմ  
Մասիսի սոսրոտը , Ակոսիի աւերեալ այ-  
գեստանեաց մէջ տակաւին պիտի գտնես  
սերունդն այն որթոց զորս Նոյ տնկեց երբ  
դուրս ելաւ տապանէն : Սյոր , ինչպէս ի  
հնումն , մասնակից եմամէն ուրախութեանց  
և համայն խնջոյից . ամէն ինչ կը պակասի  
անդ ուր ես կը պակասիմ :

« Խրձիթն ու պալատը զիս կ'ընդունին  
երջանկութեամբ . պալատին մէջ կը զուար-  
թացնեմ զմեծատունն : Խրձիթին մէջ կը մը-  
խիթարեմ զաղքատն :

« Զիս աշխարհալուր կը հոչակէ բա-  
նաստեղծըն . կ'երգէ իմ գովեստներս : Իմ  
դիւթիչ բաժակէ՛ս իւր գեղեցիկ գեղեցիկ  
ներշնչումներն կ'ըմպէ :

Վաստակաբեկ գործաւորն , ուժասպառ  
հիւանդն , անզօր մանկիկն և դողդոջուն  
ծերունին կը գտնեն յիս քաջութիւն , զօ-չըլլ

րութիւն , առուգութիւն : Հուսկ ուրեմն ,  
վաճառականութեամբ որոյ ասարկայն եմ ,  
օրապահիկն կը հայթայթեմ միլիոնաւոր  
գործաւորաց . դիւրակեցութիւն կը րերեմ  
գործօն մշակին տունը և անխոնջ վաճառա-  
կանը կը հասցնեմ ի ճոխութիւն : Այլ եւս  
ի՞նչ արժանիք ունենալու է փափագելու  
համար օրինաւոր գերազանցութեան մը զոր  
թուի թէ կը զլանաս ինձ : Խօսէ՛ , եղբայր  
իմ , ունկնդիր եմ քեզ :

— Ես , ըստ Զուրը , աստուածական ես  
ընդունած չեմ պատիւ . բայց ոչ նուազ ե-  
րիցագոյն եմ քան զքեզ ամէն տեսութեամբ :  
Նախ քան զքեզ էի ես , և իմ չնորհիւս կըր-  
ցաւ ծլիլ , բարդաւածիլ առաջին տունին  
որթոյ յորմէ եկած ես դու ի դոյ :

Բաց աստի այն երկնային պատիւն որով  
առաջին դարերն զքեզ պատուեցին , ոչ այլ  
իմիք ծառայեց բայց միայն գաղանային կը-  
րից քո անոպայ երկրպագուացդ :

Ի՞նչ չուայտական տօներ , և քանի՛ ո-  
ճիրներ գործուեցան յայնժամ և դեռ կը  
գործուին քո անուամբն : Մեր օրերուն մէջ ,  
ի են բանտերը ոճրագործներով որք կը  
սլաշտեն զքեզ : Խոկ գալով քո տարածմանն  
երկրագնտիս վրայ , դու ի՞նձ կը պարտիս  
զայն , զի ջուրն զքեզ նախ տեղափոխեց :

Արդարեւ երրեմն ուրախութեան ես պատ-  
ճառ , սակայն երրեմն ալ ո՛րչափ դառնու-  
թեամբ , քանի՛ ամօթով և ի՞նչ անկուն թլշ-  
ուառութեամբ կը լնուս ընտանիքներ որոց  
այս ինչ անդամն , պատուաւոր առանց քեզի ,  
նուաստացաւ , գձձեցաւ , ինկաւ ի տիղմ  
տնպատուութեան այն ապականիչ ոդիէն զոր  
կը պարտւնակես դու : Քո մէն մի կաթիլն  
յաճախ արժած է արտասուաց կաթիլներ  
ընտանեաց մայրերու : Գիտե՞ս , առ ի՞նչ  
կ'արտասուեն այդ ծնողք . — զի իւրեանց  
որդւոյն ձեռքն մի օր գաշոյն մը տուիր ,  
զոր կարմիրուց նա անմեղի մը արեամբ , և  
արդարութեան ձեռքն զինքն հանեց ի  
կախազան : Կ'ըսեն նաև թէ ուժերը կը  
նորոգես նեւ առողջութիւնը կը դարմա-  
նես : Երբե՛ք , օրըստօրէ զանոնք կը խան-  
գարես , կը տկարացնես : Եթէ օդտա-  
կար ճանչած են զքեզ մարդիկ , գոնէ ան-  
հրաժեշտ պէտք մը չես : Ես , ընդհակառա-  
կըն , առաջին և կարեռի պէտքն եմ մար-  
դուն , անասնոց և բոււսոց խոկ , և եթէ ես  
ծերունին կը գտնեն յիս քաջութիւն , զօ-չըլլ

պիտի ըլլար ահաւոր անսալատ մը , երկիր իշխանութեան մահու : Ես , զովացուցիչ եւ տնիվսաս , չունիմ բնաւ տիրառիթ յատկութիւնն բանականութիւնը խանգարելու , և զմարդն ի չարփս և յոճիրս մլելու . աղտեղութիւնքն որոց դու իսկ ես պատճառ , ես եմ որ կը մաքրեմ զանոնք . իմ յատակ զօրութեամբս կամ այն զօրութեամբք զորս տունկերն ինձ կը հազորդեն , անթիւ եւ անհամար բժշկութիւններ կը գործեմ :

Ուր ուրեմն կը մօտեցնեմ ազգերը միմեանց , այն լայնալիր աւագաններով զորս ես կը լնում . կը ծառայեմ արուեստից եւ ճարտարութեանց իմ սովորական ձեխս տակ կամ կաթսայի մը կողին մէջ շոգիացած : Այս վերջին վիճակիս մէջ կը մլեմ յաղթահասակ լեռնանման նաւերը յերկրէ յերկիր , յաշխարհէ յաշխարհէ . կը քաշեմ կը տանիմ ետեւէս , երկաթեայ ժապաւէնի մը վրայ , անթիւ կառախումբեր , և այսպէս , հզօրտարր քաղաքակրթութեան և նիւթական զօրութեան , կը սփոեմ յընդհանուրս գործունէութիւն , շարժումն և կեանք :

Ի մի բան , ազգաց և ազանց բարերար ոգին եմ ես , որոյ առջեւ , դու ամէնէն յառաջ պարոփիս խոնարհիլ :

Գինին կարկեցաւ մնաց լեզուակասլ .... յաղթուած՝ էր :

Թարգ .

Բարեփոխմամբ

Մ. Ա. Ս. Բ. Ա. Ն. Ա. Զ.



## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԸՆԹԱՑՔ

### Հ Ա Յ Ե Բ Ի Ն Լ Ե Զ Ո Ւ

Թէ Զէ Ել Զէ ՄԱՐԹ ՅՈՒՐԱՍՏ Լինել Ի ԽՍՋԵՆ

Ընկա՞լ անշարժ հիմն զիսաչն , և շինեա՞ ի վերայ նորա զամենայն հանդէսս հաւատոյ : Մի՛ ուրանար զիսաշեալն , զի թէ յուրաստ լինիսւ , բաղում են՝ որ կշտամբեալ յանդիմանեն<sup>9</sup> զքեղ . նախ Յուղա կշտամբեալ յանդիմանէ զքեղ . նախ առաջին մատնիչն . զի որ մատնեացն՝ գիտէ նա , թէ ի քահանայից և յերիցանց գատապարտեցաւ նա ի մահ : Յառաջ գան այսուհետեւ վկայք բա .

զումք . յառաջ կացեալ վկայէ երեսուն արծաթին<sup>5</sup> , անդէն վկայէ դեխտամանին , ուր մատնեցաւն իսկ . զլեառն ձիթենեաց չե է իմ ասացեալ , յորում եկեալ յաղօթս կային գիշերին<sup>6</sup> . վկայէ անդէն ի նմին գիշերի լուսինն , վկայէ անդէն և տիւն . և արեգակն որ չքայաւ , զի ոչ կարաց հանդարտել տեսանել զանօրէն գործ գաւաճանաց : կը տամբեալ յանդիմանէ և հրատն<sup>7</sup> , առ որում հասեալ կայր Պետրոս և ջեռնոյր : Եթէ յուրաստ լիցիս ի խաչէ անտի , կայ<sup>8</sup> մնայ քեղ հուրն յաւիտենից . վասն այսորիկ խիստ ասացի , զի մի՛ ընդ քեղ խիստ անցք անցանիցեն : Յուշ լիցին<sup>9</sup> քեղ սուսերքն , որ ի դեխտամանին ի վերայ եկին նորա , զի մի սուրքըն յաւիտենից պահեսցին քեղ : կը տամբեն զքեղ և ապարանքն կայիափայ ընդդէմ կացցէ քեղ եւ պաշտօն . եայն , որ զապտակն տեառն մատուցանէր , և որ կապեցինն զնա , և առին գնացին : Ընդդէմ կացցէն քեղ էնտենիցին քեղ : կը տամբեն զքեղ նորա , որ ի հրէից առաջի մեր գատեցաւն , եւ մեք մեղէն գիտացաք , զի զնաս ինչ ո՛չ դոյր ի նմա : Զի ես իսկ Պիղատոս լուացի զձեռու իմ , և ի բաց կացի : Ընդդէմ կացցէն քեղ եւ սուստ վկայքն եւ զինուորքն , որ զծիրանի հանդերձն արկին զնովաւ . և փուշ պատկն , որ<sup>10</sup> եդին ի վերայ գլխոյ նորա , եւ ի Գողգոթայս յայս ի խաչ հանին զնա , և ի վերայ հանդերձի նորա վիճակս արկանէին : Յանդիմանեալ կշտամբեցէ զքեղ եւ նմաւոն կիւրենայի , որ զիսաչն առեալ բերէր զէնտ Քրիստոսի :

Յանդիմանեացէ զքեղ ի լուսաւորաց արեգակն ինքնին գլխովին<sup>11</sup> , որ յանդիմանեակին չքացաւ . և յերկրէ գինին զմուսեալ , եւ յեղեգանցն եղէգն , և ի բանջարոց զոպայն , և սպունգն ի ծովային թաղանթացն<sup>12</sup> , և ի ծառոց փայտ խաչին : Զինուորքն որ բեւեռեցին ընդփայտն զոտան և զձեռուն , եւ ի վերայ

հանդերձին վիճակս արկանէին . զին-ուորն այն՝ որ գեղարդեամբն զկողմն բանայր , կանայքն կշտամբեսցեն դքեզ , որ յայնժամ չուրջ զնովաւ . կային , վարագոյր տաճարին , որ պատառեցաւ վերուստ ի վայր : Հրապարակին Պիղատոսի , որ յայնժամ ի զօրութենէ խաչելոյն՝ և այժմիկործանեալ յաւեր բերի<sup>11</sup> միշտ : Գողգոթայն սուրբ , որ բարձրացեալ է քան զամենայն , և մինչեւ ցայսօր երեկի ամենեցուն , և ցուցանէ մինչեւ ցայժմ իսկ՝ որպէս և յայնժամ վասն Քրիստոսի վէմքն որ պատառեցան : Գերեզմանն մօտ իսկ աստէն ուրեղաւն , և վէմն որ ի վերայ դրանցն եղաւ . որ մինչեւ ցայսօր ի վեր քան ըզգն բանականն երեկի : Հրեշտակին՝ որ չուրջ զնովաւ կային , կանայքն՝ որ երկիրպատանէին յետ յարութեան . Պետրոս եւ Յովհաննէս՝ որ ի գերեզման անդը ընթացան . եւ Թովլմաս՝ որ զձեռուն ի կողմն անդը արկանէր , և զմատունս ընդ վէրս բեեռուացն : Զի՞նա վասն մեր ճշմարտէր ի չօշափել անդ , և զոր գուդինդերելոց էիր այժմ , որ յայնժամ չէիր անդ , նա իսկ խորհրդով խնդրեաց :

Ահաւասիկ կան եւ երկոտասան առաքեալքն վկայք խաչին . ահաւասիկ տիեզերք ամենայն , և աշխարհ ամենայն վկայէ ի հաւատալն իւրեանց վասն խաչելոյն ի վերայ ամենայն մարդկան . Քո իսկ աւագիկ գալյայս տեղի՝ հաճէ ըզմիտս քո վասն խաչելոյն զօրութեան : Զի՞ ո՞վ է , որ զքեզ ժողովեաց . ո՞ր զօրք , ո՞ր գահինք , ո՞ր կապանք , զի՞նչ շտապ տագնապին<sup>12</sup> , զի՞նչ պատիժ փութացոյց գալ հասանելյայս տեղի քեզ , եթէ ո՞չ նիշնէ յաղթութեան և փըրկութեան խաչին զամննեսեան ժողովեաց : Այս է՝ որ զՊարսիկս ի ծառայութիւն նուաճեաց<sup>13</sup> . այս է՝ որ զիսուժագութէ<sup>14</sup> ազգս յընդանութիւննէ կոչէ . այս է՝ որ եղիպտացոցն փախանակ կը զիցն<sup>15</sup> և շանցն և ազգի ազգի մհլորութեանցն զամտուածգիտութիւն չնորհեաց : Այս է՝ որ մինչեւ յայսօր հալածէ

զդես . այս է՝ որ զդիւթաց<sup>16</sup> եւ զկախարդաց մինչեւ յայսօր կործանէ ըզթովզութիւնս : Այս է՝ որ ընդ տեառն Քրիստոսի երեւելոց է դարձեալ միւսանդամ<sup>17</sup> յերկնից յերկիր :

Զի գայ առաջի մեծի թագաւորին , զնշանն յաղթութեան առաջի բերէ . զի տեսցեն յոր խոցեցինն , եւ ի խաչէ անտի ծանիցեն զանարգեալն , յոր ո՞չ ապաշաւեցին<sup>18</sup> հրեայքն . և անդէն ըզկոծ առցեն<sup>19</sup> նոքա , եւ կոծեսցին աղդսառ ազգս : Զի յայնժամ դարձցին յապաշխարութիւն , յորժամ չիցէ նոցափրկութեան ժամանակ :

Կոչումն լնծայութեան ձառ. Ճ.Գ.

Թարգ. Նախնեաց Ե. Գարու

#### ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

1. Յուրաս լինել . ուրանալ : Այս բայը երեք տեսակ լինդիր կրնայ տունուլ , և կը գործածուի նաև կալ բայով , ուստի կ'ըսուի յուրաս լինել , կալ (ինչ , յիմեքէ , զիմեքէ) :

2. Կը ամբեալ յանդիմանեն . կը յանդիմանեն : Ընտիր մատենագրաց սովորութիւննը է այսպէս երկու հոմանիշ բայեր քովէ քով , առաջինը չանցեալ ընդունելութիւն , գործածել . ուստի կ'ըսուի՝ յարգեալ զովել , պանծացեալ պարձել , յայս արարեալ ցուցանել ևն :

3. Արծարի . արծաթեղին : Հոս գոյակականար առնուած է և կը նշանակէ արծարէ դահնեկան :

4. Դիշերին . սովորաբար գիշերի . մակրայ. գիշեր ատեն :

5. Հանդարտել . դիմանալ , համեկերել :

6. Հրաս . կրակ , խարոյկ :

7. Կայ մնայ եեզ : Կայ աւելադրութեամբ գործածուած է հոս : Կամ բային այս գործածութենէն յառաջ եկած է աշխարհաբարին կը մասնիկը . Գրաբարին կայ մնայ , կայր տեսնելը , կայ եւ ուտէ , կայր եւ խօսէր են . բացատրութիւնքն եղած են աշխարհաբարի մէջ կը մնայ , կը տեսներ , կուտէ , կը խօսէր են : Միավանի բայերուն վրայ կը ի տեղ կու գործածուած է , կուգամ , կուլամ , կուտամ :

8. Որ եղին ի վերայ զիխոյ նորա . դողխա-

նակ ըսելու զոր եղին.... Որ յարաբ . դեռանունը կրնայ երբեմն այսպէս առանց զի գործածուիլ . ինչպէս , կամ զերկիր՝ որ հանապազ բրեմք և ցանկ կոխեմք : Եզնիկ : Աճապարեա խորհել որ ինչ գործածուին երբեմն որ ինչ , և մի . ինչպէս , Զամենայն որ ինչ պատուիրեցի : Վասն ամենայնի որ ինչ կամէր : Եւ առ մի ի կողից նորա , եւ ելից ընդ այնր մարմին : Արձակեաց նա մի յիշ-խանաց իւրոց :

9. Ինքնին զիխովին . նոյն իսկ : Կ'ըսուի նաև ինքնին ի զիխովին . Զոյդ մակրայներու այսպէս աւելադրութեամբ գործածութիւնըն աւ սովորական է ընտիր նախնեաց մէջ , երբեմն եւ ով կապուած . ինչպէս , անդրէն միւսանգամ , ցանկ եւ միւս , յեղակարծումն յանկարծուս ևն :

10. Ի ծովային քաղանքացն . (թերեւս) ծովային մարմիններէն :

11. Կործանեալ յաւեր քերի միօս . միշտ կործանուելու , աւրուելու վրայ է կամ կը միտի :

12. Շապ Շագնապի . տագնապ , իրար անցում : Երկու հոմանիշ գոյականներ կը նան այսպէս քաղիք քով գործածուիլ , երկ- րորդը սեռական հոլով որ աւելադրութիւն է . այսպէս կ'ըսուի . շահ օգսի , արուրին քաջուրեան , մարտ պատերազմի ևն :

13. Նիւ . նշան :

14. Ի ծառայուրիւն նուանել . ծառայ ը- նել . հալատակեցնել , նուածել :

15. Խուժադուժ . բարբարոս :

16. Ընդանուրիւն . ընտանութիւն : — ո գիրն լծորդ է ս ի հետ և յաճախ անոր տեղ գործածուած . ինչպէս , բանտ , բանդ . գունտ , գունդ . ժանտ , ժանդ : — Լծորդ կ'ըսուին այն տառերը որք ձայնիւ մօտ ըլլալով իրարու տեղ կը գործածուին . Այս . պէս թ , զ , ձ , շ ինչպէս նաև դ ն , որոնք միջակ կը կոչուին , կը գործածուին պ , կ , ն , ծ , ս տառերուն տեղ որոնք նուրբ կը կոչուին . զոր օրինակ . Ամալ , ամր . ամզա- րիշտ , ամբարիշտ . ըմսել , ըմբել . զուսպ . զուսք : — Անկ . անդ . մանկ , մանդ . ցանկ , ցանդ . ընկեր , ընդեր : — Ինձ , ինձ (գա- ղան) . ստանծալ , ստանձալ . հնծան , հնծան . գծուծ , գծուծ : — Կինձ , կինջ . ձանձիւն . ջանջիւն . խառնաղանձ , խառնաղանջ . դէմ գէջ . բէմիճ , բջիջ :

17. Կուզ . կատուի նման կենդանի մը զոր եգիպտացիք կը սլաշտէին :

18. Դիւր . կախարդ . մուգ :

19. Դարձեալ միւսանգամ . Տես թիւ 9 :

20. Ապաւաւել . զղալ

21. Զիոն առնուլ . կոծել , լալ :

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺՐԻ

Ա.

Աշակերտը պարտի զծերուն տեղ անցեալ դերբայ մը դնել , որ հոմանիթ ըլլայ յաջորդ գիմաւոր բային :

1. Զորոց կէսն ի կրելիս , և զիէսն ի զրօ- սանս..... համբուրեցուցանէ : Եզնիկ : — 2 . Այլ ամենայն ինչ ..... սրանայ . և իրեւ զլուր սահէ անցանէ : Ուսկ . Մեկ . Պաւլ : —

Զարորմիզ նաւամարտիկ նաւացն Յունաց..... վկանդէր : Եւս . Քր . — 4 . Հոչեցաւ Ա- դամ : Նոյն : — 5 . ԶԲարելոն ի ներքոյ ձե- սին ..... հնազանդէր : (Նոյն :)

— ուղղեալ . — 1 . Ընտելացուցեալ : — 2 . Ընթացեալ : — 3 . Վանեալ : — 4 . Սնուան- եալ : — Նուածեալ :

Բ.

Աւակերտը պարտի զծերուն տեղ մակրայ մը դնել որ հոմանիթ ըլլայ արդէն գտնուած մակ- րային :

1. Աստուած յորժամ սուեղծ ի սկզբանէ զմարդն , վաղվաղակի..... պուհոցն պատուի- րանաւն հրաման ետ նմա : Ուսկ . Ճռք : — 2 . Շունս զայնոսիկ ասէ՝ որ վայրապար և ..... ընդդէմ տեառն իւրեանց զօղանջեն : Նոյն : 3 . Հան զայն ի մոտաց , և տեսանես որպէս . . . . իրքն իցեն՝ երկեն : Ուսկ . Մեկ . Պաւլ . Զգտանէին հնար՝ եթէ զիարդ չու առնի- ցեն , ակամայ կամօք..... զկեանս տշխար- հին՝ յոր հասին՝ հաստատեալ Եւս . Քր : — 5 . Բաղըւմ անգամ զոր բարին կարծիցեն , մի- այն..... տռանց ընկերին խառնութեան վը- նասակար լինի : Եզնիկ :

— ուղղեալ . — 1 . Անդէն և անդ . — 2 . Ընդ վացր : — 3 . Զիարդ : — 4 . Ի հարկէ : — 5 . Առանձին :

Գ.

Աւակերտը պարտի զծերուն տեղ նախընթաց գոյականին հոմանիթ գոյական մը դնել սե- ռական հոլով :

1 . Զի բազմադիմի բանիւն յաճախիցէ շահ..... Ուսկ . Մեկն . Ես . — 2 . Յիրաւի կրէ պատիմ..... այնպիսին : Եզնիկ : — 3 . Սանձ-

եաց նահանջեաց Աստուած զսաստկութիւնն առ ծովու : Բրաղ . ձռք : — 4. Գային տալ մարտ .... : Ագար : — 5. Որո՞ւմ ներելոյ .... Անիցիմք արժանի , Ռոկ . Մեկն . Մըր :

— Ռողիալ . — 1. Օդտի : — 2. Պատու . Հասից : — 3. Բռնութեան : — 4. Պատե . Րազմի : — 5. Թողութեան :

Դ .

Աւակերտը պարտի նետեալ նախադասութեանց բայերուն տեղ հոմանիշ ոն մը գործածել :

4. Զչարչարանոն զոր դուք արդեսմիք կրեցէք . մեք ականջօֆ լսել չեմք բաւական , Ռոկ . ձռք : Զ . — Եղին ի մոխ այնուհետեւ ոչ այսր անդր այցթաքել , այլ հաստատուն յամանեալ տոկալ . յենուլ ի համբերութիւն , պնդել ի պատերազմի . ժառանգել զանուն քաջութեան : Միք . — 3. Ահաւասիկ երիս հարուածու տամ քեզ ընտել , խնդրեա մի ինչ զոր և կամիս : Սերեր , : — 4. Ննջէ ի ծովուն առ ի ճշմարտելոյ զմարմնոյն բնութիւն , և յարուցեալ՝ ննջեցուցանէ զալիս ծովուն : Նոյն : — 5. Զտեսանիցէ՞ք դմանկունս մատազմ՝ որպիսի՝ յօժարութեամբ ունին զստեանցն մարցն : Ռոկ , Մեկն . Մըր :

— Ռողիալ . — 1. Յականջալուրս լսել : — 2. Զոտս ի բոյս հարկանել : — 3. Յընտիր առնեմի քեղ : — 4. ի քուն առնէ : — 5. Բուռն հարկանեն :

Ե .

Հետևեալ բառերուն հոմանիշները գըտնել . ահ . զէր . բողբիել . իսկոյն :

Ահ . Ահաբեկութիւն . արհաւերք . երկեղուկ . երկիւան . զարհուրանք . երկիւլ . խէժ . խուճապ . կասկած . պակիւցումն . սարսափ . սոսկումն :

Քէք . Անձնեղ . բուկան . մարմնեղ . մսեղ . յոյր . պարարակ . պարարտ :

Բողոքել . Աղաղակ հարկանել . բողոք բառնալ . բողոք կարգալ . բողոք հարկանել . բողոք ունել . դատախալ լինել . իրաւունս ինդրել . կարգալ առ ոք :

Խալոյն . Առժամայն . նոյնժամայն , նոյն հետայն . առ օրին . առ ետեղ . առ ձեռն . յական թօժտափել . ի նոյն . նոյն ընդ նոյն . իսկ և իսկ . հետ ընդ հետ . փոյթ . ընդ փոյթ . ձեպ ընդ ձեզ . ձեզ ի ձեպոյ . հազճեպիւ . վաղ ընդ փոյթ . ձեզով . չառալ . արագ . վաղ վաղ . վաղվաղակի . տագնապաւ . վա-

զագոյն . անդէն . անդէն և անդ . անդէն առ նմին . անդէն վաղվաղակի . ընդ հուսունդէն ի կողի :

Զ.

Քանի՞ կերպով կրնայ ըսուիլ գրաբար լեզուաւ :

1. Օրը իրկուն ըլլալու վրայ է : — Տարաժամեալ է օրն : Երեկոյացեալ է ժամն : Դառնայ օրն յերեկս : Ժամն ընդ երեկս կոյս խոնարհեալ է :

2. Վերջին ըունչը փչելու մօս է : — Յոգւոցն պարզել ապաստան է : Մերձ է ի մեռանել : Շունչն վախճանի հասեալ է : Յոգիս ապաստան եղեալ կամ լետալ է : Ի շունչ վախճանի հասեալ է : Ի դուրս մահու հասեալ է : Փոքր միւս ևս և մեռանի : Սակաւիկ մի ևս և վախճանի : Յօրհաս մահու ժամանեալ է :

Մ. Ա.Ս.Բ.Ա.Ն.Ա.Զ

— ՀՅԵՅՑ —

Փ ի լ ի Ս Ո Փ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀՈԴԵԲԱՆՈՒԹԻՒՆ

(Պերպերեան վարժարանի մէջ աւանդեալ

դասուց ամփոփումն) :

Դ Ա Ս Զ .

ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՄԱՐՈՒԹԻՒՆ

(Նար. թիւ 17)

36. Խելամուքիւն : — Խելամուքութիւնն ընծայութեան հակառակ ուղղութեամբ կը գործէ , մասնաւոր իրազութեանց և երեւութից զննութենէն կը բարձրանայ ընդհանուր իրզողութեանց , ընդհանուր իրզութեանց հասողութեան : Ընդհանուր իրզութեան մը , ընդհանուր ճշմարտութեան մը վերահասու ըլլալ կը նշանակէ երեւութից մէջ անյեղլի կապակցութիւն մ'ըրեւնել և հաստատել թէ միշտ և ամեն ուրեք այս ինչ երեւոյթք զուգընթաց կամ յաջորդականք են միմեանց : Ընդհանուր ճշմարտութիւն մ'է թէ հեղուկ մարմնոյ մը մէջ ընկղման հաստատուն մարմինք կը կորսնցնեն իրենց ծանրութենէն մաս մ'որ հաւասար է իրենց տեղափոխած հեղուկին ծաւոլին ծանրութեան . այսինքն թէ կը հաւասար որ ամենուրեի և ամեն ժամանակ մարմնոյ հեղուկի մը մէջ ընկղման և իւր-

եանց ծանրութեան նուազման մէջ այս յարաբերութիւն պիտի տեսնուի, ինչ որ ալ լինին մարմինք և հեղուկը, ընդհանուր ծշմարտութիւն մ'է թէ ալքոհոլաւոր ըմպելեաց գեղձաց գեղձումն մտային տկարութիւն ու խանգարում կը պատճառէ, այսինքն թէ կը հաւատամ որ ամենուրեք և ամէն ժամանակի մէջ ալքոհոլաւոր ըմպելեաց գեղձան հետևանքը պիտի լինին մտային տկարացումն ու խանգարումն, ինչ որ լինին ըմպելեաց և ո՛ոք և լինին արբեցողք: Ընդհանուր իրողութիւն մը կ'անուանի նաև օրէնք մը: Արդ այսախի ընդհանուր իրողութեանց, ընդհանուր ճշմարտութեանց, օրինաց խելամուտ կը լինի մարդ ի ձեռն իմացական այն կարողութեան կամ գործողութեան որ կը կոչուի խելամուրիս: Ի՞նչ եղանակաւ: — Դիտելով, զննելովինչ ինչ մասնաւոր իրողութիւններ, և յետոյ ամէն նման իրաց, անհատից ու պարագայից վրայ տարածելով ոմանց վրայ միայն դիտուած ու հաստատուած հանգամանքն ու առնչութիւնքն: Ինչպէս կը տեսնուի, խելամուտթիւնը փորձով, փորձառութեամբ կ'սկսի, բայց կը գերազանցէ զայն, անոր անձուկ սահմաններէն դուրս և հեռուն կ'արշաւէ, միջոցի ու ժամանակի ինչ ինչ կէտերուն վրայ միայն դիտուածն ու հաստատուածը տարածելով բովանդակ միջոցին ու տարածութեան վրայ: Ոչ միայն կը հաւատամ թէ ապրած ժամանակիս ու աղրած տեղերուս մէջ գիշեր և ցերեկ իրարու կը յաջորդեն, այլ և կը հաւատամ թէ երկրիս [ամէն կողմն նոյն] յաջորդութիւնը տեղի ունի, և թէ անցեալ գարուց մարդիկ ինձ պէս հանդիսատես եղած են միւնոյն յաջորդութեան և թէ ապագայք պիտի լինին նոյնպէս ցորչափ կայ [և մոյա աշխարհս: Հսա այսմ կը շարունակեմք սնանիլ միւնոյն նիւթերով՝ անգամ մ'որ խելամուտ եղած ենք անոնց սննդարար յատկութեանց, նման հիւանդութեանց համար կը գործածեմք միշտ միւնոյն դեղերն որոց օգտակարութիւնն գամ մի հաստատուած է նմանօրինակ պարագայից մէջ, կը շարունակեմք ի գործ դնել վստահութեամբ մի և նոյն նպատակաց համար մի և նոյն միջոցներն՝ զորս փորձն արդիւնաւոր ցոյց տուաւ ինչ ինչ առիթներու մէջ, կը համարիմք զամէն մարդիկ, այսինքն մեզ նման

ամէն էակներն, ունեցող այն կարողութիւնքն ու յօժարութիւնքն զորս կ'զգամք ի մեզ, այսինքն կը հաւատամբ ամէն նման իրաց մէջ այն յատկութեանց գոյութեան, որք տեսնուեցան ոմանց մէջ, նման երեւթից մէջ երեւմանն միւնոյն նկարագրական (caractéristique) նշաններուն որք գիտուեցան ոմանց մէջ, նման տեսանելի կերպարանաց տակ մի և նոյն հաստատուն ձեւերուն ներկայութեան, և այլն: Ապա խելամուրթիւն ընտանի և սովորական գործողութիւնն է մտաց, այնու մեր փորձերէն կը խրատուինք, անցեալէն ու ներկայէն զապագային կը նախատեսեմք, ու մեզ անմատչելի անցելոյն վրայ ալ մեր ծանօթութիւնը կ'երկարաձգեմք, այնու կը վարիմք մեր հանապազօրեայ կենաց ամենէն սովորական գործողութեանց ու վարմանց մէջ, ինչպէս ցոյց տուինք նախնիթաց օրինակաց մէջ: Ամէն վայրկեան խելամուրական իմաստասիրութիւններ կ'ընեմք, գէթ լսելեայն: Ի գործ դրուելով այն զգուշութեամբ զորս տրամաբանութիւն կ'ուսուցանէ, խելամուրթիւն գործին է բոլոր փորձառական գիտութեանց, կ'առաջնորդէ զգիտունն ի գիւտ բնութեան օրինաց: Խակ անզգոյշ, հապճեպ, անկատար, վեր ի վերոյ խելամուրթիւնք վտանգառոր են, զի փոխանակ ստոյգ օրինաց, ընդհանուր ճշմարտութեանց առաջնորդելու, սխալ հետեւութեանց կը տանին զմեզ, իբրև հաստատուն ինչ նկատել տալով ինչ որ պատահական է միայն և օրէնք մը տեսնել տալով անդ ուր դիպուածական հանդիպում միայն կայ: Այս կերպով, օրինակի համար, գիտաւորի մ'երեւումը պատճառ կրնան համարել տղէտք սովոր կամ պատերազմի: Շատ նախալաշարմանց ու սխալ կարծեաց պատճառք են անզգոյշ խելամուրթիւնք:

37. Առնչութիւնն թնծայուրեան և խելամուրեան: — Բնծայութիւնն և խելամուրթիւն սերտ կապակցութիւն ունին միմեանց հետ: Ընծայութիւնն խելամուրթենէն կ'առնու այն ընդհանուր ճշմարտութիւնքն որոց հետեւութիւնը կ'եղրակացընէ: Խակ խելամուրթեան ընծայութիւնն է որ յաճախ առիթ կը մաստակարարէ հետազոտելու, քննելու իրողութիւններն ստուգելու համար տեսութիւններ որոց չա

հասած է իւրուրոյն ճամբայներով։ Բաց աստի, երբ հարցնենք թէ ի՞նչ կերպով միտքը խելամոռութեան մէջ կը համարձակի մասնաւորներէ ընդհանուր հետևութեան մը հասնիլ, յինչ ինչ դիպաց եզրակացնել յամենայն դէպս, կը տեսնեմք թէ ամէն խելամոռութիւն հիմնուած է մի ընծայութեան վրայ, կամ թէ ըսեմք, ամէն խելամոռութիւն կը վերածի ընծայութեան մը, ունենալով իրեւ հասարակաց մեծագոյն նախադրեալ (իրեւ սկզբունքը) սա նախադասութիւն, «Հստ կարգաւորութեանն որ կայ ի տիեզերս միւնոյն պատճառք միշտ և ամենուրեք յառաջ կը բերեն միւնոյն արդիւնքներն» ։ Եւ ընծայութիւնը՝ իւրաքանչիւր խելամոռութեան դէպքի մէջ՝ կրնայ շարունակուիլ այսպէս։ «Արդ, կը դիտուի թէ այս ինչ պատճառ յառաջ կը բերէ այս ինչ արդիւնքը, ապա միշտ և ամենուրեք այս պատճառը յառաջ բերած է ու սկսուի բերէ այս արդիւնքը»։ Ի մի բառ, ընծայութիւն և խելամոռութիւն իրարմէ տնրաժան են. ամէն ընծայութիւն յինքեան կը սկարուրէ խելամոռութիւն մը, որպէս ամէն խելամոռութիւն ընծայութիւն մը։ Երկոքին ևս կիրառութիւնքն են բանին սկզբանց, ընծայութիւնն նոյնութեան սկզբունքին, իսկ խելամոռութիւնն՝ բաւարար պատճառի եւ պատճառաւորութեան սկզբունքներէն բըզմող մասնաւոր սկզբունքներէ միոյն (կարգի սկզբան), Աստի բառից, անոււնց ալ նմանութիւնն. լատիներէն՝ ratio (բան) եւ rationocinatio (իմաստասիրութիւն), նոյնպէս յունարէն՝ ὀργισμὸς, գաղիերէն՝ raisson եւ raisonnement, հայերէնի մէջ ալ Բան և Տրամարանուրիւն, որ գրեթէ հսմանից է իմաստասիրութեան, զի իմաստասիրել և տրամարանել կը գործածուին անխտիր։ Է՞՞, ոսկայն, մերթ իմաստասիրութիւն կարծես կը հակառակի բանականութեան, այնպէս որ Մոլիէր ալ կրցած է Femmes savantesի անձերէն միոյն ըսել տալ,

Raisonner est l'emploi de toute la maison.  
Et le raisonnement en bannit la raison. —

Վասն զի շատ անգամ մարդիկ չարաչար ի գործ կը գնեն բանին սկզբունքներն, որով մինչդեռ այս վերջինք անմիջական յայտնութիւն ունին ու անվրիսելի են, ի-

մաստասիրութիւնք կրնան սխալ և խարէ-ական լինել:

Ո. Յ. ՊէրՊէրեան

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ<sup>(1)</sup>

Ա. Ռ. Ե. Ի. Է.

### ԵԳԻԴՏԱՑԻՖ

ԿՐՈՆՔ ԵԳԻԴՏԱՑԻՈՅ

Եգիպտացիք՝ ըստ Հերոդոտեայ՝ էին ամենին ջերմենանք ժողովուրդը։ Զայս կը հաստատեն նկարք և ձեռագիրք։ Նկարք կը ներկայացնեն ազօժմիեր մարդիկ գից տուջեւ, իսկ ձեռագիրք են ողորմութեան գիրք։

Դիք Եգիպտացւոց. — Եգիպտացիք կը պաշտէին Դից Երրորդուրիւն մը, հայր, մայր, որդի։ Հայրն էր ստեղծիչ (իմուսմու) և բարերար, որ գիտէ զամենայն և որոյ սկիզբն չէ յումեքէ։ Այս երրորդուրթիւնը չգանազան անոււնակոչութիւններ ունէր, այլ և այլ գաւառաց մէջ։ Ի Մեմփիս հայրը կը կոչուէր Փտահ, մայրն՝ Սելսէլ, և որդին՝ Իմութէս։ յԱրիւթոս՝ Ոսիրիս, Իսիս, Հոռոս. և ի թէրէ՝ Ամմոն, Մութ և Խոնս։ Դիք կը նկարուէին մերթ ի կերպարանս մարդկան և մերթ ի կերպարանս անասնոց, և, յաճախ, ի չորս կերպարանս, բազէի՝ մարդկան գվառով, մարդկան՝ բազէի գվառով։ Ուստի, Եգիպտացիք կը պաշտէին կովը, քաջահաւը, բզէզն և բազէն — Նլութրական անասունե — և, որպէս կ'ըսէ Պօսիրէ, ամեն ինչ յԵգիպտա աստուած էր, բաց յԱստուծոյ։

Փտահ մարմնացեր էր ի բզէզան, Հորոս՝ ի բազէի, Խոսիրիս՝ ի կովու։ Այս նուիրական անասնոց մէջ յոյժ յարգելին էր Սալիս կովը որ կ'ասլուէր ի մատրան ուրեք, ի Մեմփիս, ուր քուրմք կ'սպասաւորէին նմա։ Երբ կը մեռնէր, զայն կը զմռանէին, և նորս մարմնը կը գնէին տապանատան մէջ որ կը կոչուէր « Ոսիրա-Հասպի » , ըստ Յունաց Սէրապէոնի, զոր պեղեց Մարիէթ Եգիպտաբանքանը։

Ոսիրիս. — Ոսիրիս՝ Արևա-աստուածն ունէր իւր պատճութիւնը (Մարիէթ, 25-41)։ Արեւն առ Եգիպտացիս, որպէս առ հին

ժողովուրդս . կը համարուէր հզօրագոյնն լարարածս , հետևապէս՝ աստուած մի : Ոսիրիս կ'սպաննուի Սէտէն՝ դիք խաւարի , իսիս՝ (լուսին) նորա այրին կուլայ զնոս եւ կը թաղէ , և Հորոս՝ (նորածագ արև) նոցա որդին իւր հօր գրէժը կը լուծէ՝ սպաննելով զՍէտ : Եգիպտացիք դից թագուրութիւնը կը կոչէին ոսկեղինիկ դար :

Ամինն-Հռա . — Ամինն-Հռա (Արք) կը պաշտէին Թէբայխուցիք : Ամինն-Հռա աւուր աւուր կ'անցնէր ընդ երկինս և իւր թշնամիները կը խորտակէր : Ահա իւր երդն :

« Փառաւորեմք զքեզ , զուարթութիւն երկինի , և ուրախութիւն երկրի . դիք եւ մարդիկ կը փառաւորեն զքեզ երր թշնամիներդ առաթուր կոխելով կը ծագիս մեծապայծառ : Ով Հռա , կեանք տուր Փառաւոնին , ջուր՝ նորա կոկորդին , հաց՝ նորա որովայնին , և հոտ անոյշ՝ նորա հերաց : » (Մասրէրօ , 280—285 : )

Դաստանան հոգեց . — Նմանապէս Եգիպտացիք կը պաշտէին մեռելոց հոգին : Կը հաւատային նոքա , որպէս արդի վայրենիք , թէ մորդ ունի իւր կրկինը (Քա) որ կը շարունակէր կենաց ընթացքը : Դերեզմանք կը կոչուէին Տուն կրկնոց , որ կը բերէին կը դնէին հանդերձ , կարասի , նկար , դիրք և սնունդ իսկ : Եւ որովհետեւ հոգին կը շարունակէր կենաց ընթացքն և վերստին կը գոնէր զիւր մարմին , ուստի , հոգւոյն այս ճանապարհորդութեան ժամանակ , դիակը կալուքարի իրնածխատով (patron) լոււնալէն վերջ՝ կը զմուսէին և կը պատառէին (մոմիք) :

ԺԱՅ . Հարաստութեան ժամանակ , սոյ հաւատքը տիրեց թէ հոգին բաժնուելով դիակէն՝ կ'երթայ կը գանէ զմուրիս երկրի վերաց , ուր Սրեւն աւուր աւուր կը մտնէի մայրն : Անդ , Ուսիրիսի առջեւ , 40 դատաւորաց ներկայութեան , հոգին կը դատուէր և իւր անցեալ կենաց հաշիւը կուտար : Հոգւոյն գործերը կը կշռէին Սրդարութեան նժարով : Առ այս սիրտը կը կոչուէր ի վկայութիւն : Մեռեալը ։ կ'ազաղակէր . « Հոգի , որ ծնած վայրկենէս ի վեր ընդ իս էլիր անբաժան , և ցորչափ առլրեցայ յերկրի վերաց , մերկապարանոց զիս զիս ներկայացուր առ մեծն Աստուած : » Զար հոգին յերկար կը չարչարուէր , ապա կ'անհետանայր , իսկ բարի հոգին՝ յետ բա-

զում փորձից՝ կ'երթար կը խառնուէր դից հոյլին հետ :

Գիրք մեռելոց . — Եգիպտացիք մոմիային քով կը դնէին փոքրիկ դիրք մը « Գիրք մեռելոց » կոչուած , ուր գրուած էր զորինչ պիտի ըսէր մեռեալն ի պաշտպանութիւն իւր անձին , Ոսիրիսի դատաստանին առջեւ :

— « Երրէք չնենգեցի , չհայհոյեցի , չգողացայ , անդթութեամբ չվարուեցայ , հեղդասիրա չեղայ , չչարախօսեցի զարքայէն և զծնողաց , նուիրական անտառներ չորսացի : Կարուտելոց՝ հաց , ծարաւելոց՝ ջուր և մերկին զգեստ տուի : Զոհ մատուցի դից , և գերեզմանական ճաշ տարի մեռելոց : » (Մասրէրօ , 38 , 39 , 40 : )

Բարոյական Եգիպտացւոց . — Եգիպտացիք յոյժ աւանդապահ էին և իրենց երկիրը կը համարէին « Դից բնակարան » . կը մեծարէին զոր ինչ կը պատկանէր դից : Անկեղծ էին , պարկեշտ և բարեսէր :

ԴԱԼԻՑԱԿԵԼԻ

## ԶԱՆԱԶԱՆՔ

### ԳՐԱԿԱՆ

ՑՈՑՆ ԼԵՑՈՒ

Ցոյն Լեզուն է մարդկային լեզուներէն այն որում վիճակած է փառաւորագոյն բախտը : Հանդարտու պայծառ երկնքի մը տակ , զեփիւսին այլէք , տերեւոց սոսափիւնք , ալեաց մրմունջք մնոր մեզմին վանդերն են կազմած , և առաջին օրէն եղած է ինքն ալ ընութեան ներդաշնակութեանց վրայ յաւելեալ մի նոր երաժշտութիւն : Իւր մանկութեան օրերէն , նա ցոյց կուտայ թէ սահմանուած է տիրել աշխարհի . անդաստին ժիք . դարին , նախ քան մեր թուականն , յոյն գաղթականութեանց հետ դուրս կ'ելնէ իւր օրօրանէ , և իւր բարբառքն լուիլ կ'ընէ յԱրեւելս և յԱրեւմուսու . Յոնիայէն ցՄեծն-Ցունաստան , Տաւրիսէն ցԹէրակղզին իրեւական կը խօսին զայն : Արագ կը զարդանայ արեւելեան հնագոյն քաղաքակրթութեանց հետ հազրդակցութեամբ , և ահա այս առանձնաշնորհեալ բարբառն , որ պիտի լինէր քերթողական երևակայութեան եւ

ճշմարտախոյզ բանականութեան միանգաւ-  
մայն գերազանց գործին, Այեւտներու եւ  
Ռաբսուներու քնարաց թելերուն վրայ կը  
թրթուայ, և Թաղէսներու, Հերակլիտնե-  
րու, Պիւթագորներու բերնէն կ'սկսի խօ-  
սիլ զիմաստութիւն: Այնու Հոմեր կ'ստեղծէ  
դիւցազներգութեան տիպարը, Արքիզոքու-  
երգիծաբանութեան, և Պինդար՝ քնարա-  
կան բանաստեղծութեան: այնու նաև Լեւ-  
կիպսու և Դեմոկրիտ, դարերով յառաջքան  
արդի դիտութիւնն, կը քարոզեն նախա-  
տարեց կամ հիւլներու գոյութիւնն եւ  
նոցա լսու հարկաւոր օրինաց միաւորումն  
կամ անջատումն: Իսկ ի՞նչ բառերով կա-  
րելի է նկարագրել այն գերապանծ փառքն  
յոր հասին յոյն լեզուն ու գրադիտութիւնն  
այն մեծ դարուն մէջ որ անուանեցաւ Դար  
Պերիկլեայ, ուր երեք մեծ ողբերգակներն  
և կատակերգակն Արիստոփան քսան երկու  
դար յառաջ Ռասաններու և Մոլիէոններու  
համար հետևելի այլ ոչ հաւասարելի հրա-  
չակերու օրինակներ արտադրեցին: ուր Հե-  
րոդոս, Թուկիդիտէս և Քուենտին ստեղ-  
ծեցին սպատմութիւնը. ուր Պերիկլեայ բեր-  
նին մէջ ատարիկան լեզուն թուեցաւ լի-  
նել աստուածոց իսկ յառակ և հզօր լեզուն.  
ուր Սոկրատ գիտութիւնը կը հիմնէր՝ հը-  
րաժարելով յենթադրութեանց և հռչակե-  
լով թէ Զիք գիտութիւն՝ բայց միայն ընդ-  
հանուրին: Այնչափ գրական, գիտական եւ  
իմաստափրական ճոխութիւն չպարտէր մը-  
նալ մի փոքր ժողովրդեան մէջ: այդ յոյն  
քաղաքակրթութիւն մարդկային քաղաքա-  
կրթութեան խմօրն էր և սպարտէր խառնը-  
ուիլ նորա հետ: Հնչեց ժամն: Յունաստան  
իւր լեզուով, աստուածներով, գրքերով, ի-  
մաստուններով, արուեստագէտներով սպի-  
ռեցաւ Ասիոյ վրայ: արևելեան ծերացեալ  
ողեսպառ ժողովուրդք խմացական նոր կո-  
րով ստացան այդ հեղեղի կենսաւէտ ջու-  
րերէն: Հելենականութիւնն (Hellenisme)  
էր որ Աղէքսանդրի բանակին հետ կուգար  
նուածել զԱրեւելս: Եկբատանէն ի Թերէ  
Հոմերի լեզուն կը տիրէր. Աղէքսանդրիա  
և Պերգամա կը յաջորդէին Աթէնքի փա-  
ռաց, այլ յոյն քաղաքակրթութիւն կը  
լինէր համաշխարհական: Մանաւանդ, երբ  
Ովրատեայ բառերով խօսելով, ճնուածեալն  
Յունաստան նուածեց իւր վայրենի յաղ-  
թողն և բերաւ զարուեստա ի կոշտն կատի.

ոն», յոյն լեզուն՝ լատինականին ևս դայեակ՝  
ստացաւ տիեզերականութիւն մ՛որում այսօր  
չէ հասած ո՛չ գաղիերէնն, ո՛չ անգղիերէնն: Ուրիշ ազդաց  
հետ մեք ալ վայելեցինք հել-  
լենականութեան բարիքներն: մեր նախնիք  
նորա հիւթով սնուցին իւրեանց միտքն ու  
պարարեցին իւրեանց լեզուն ու գրականու-  
թիւնն: մեր Արտաւազզն գրեց յունարէն  
ողբերգութիւններ: մեր մի փառաւոր արե-  
նակիցն, Պրոյերեսիոս Հայկազն, Աթէնքի  
ճարտարիսութեան բեմն գրաւեց, և գո-  
ռոզըն Հռովմանդրի նուիրեց հայ պերճա-  
խոսին այսու արձանագրութեամբ՝ «Թա-  
գուհին քաղաքաց՝ թագաւորի բանին»: Հին-  
գերորդ դարուն մէջ կրթական գաղթա-  
կանութիւն մը մեկնեցաւ մեր բնագաւա-  
սէն յԱնտիոք, յԱթէնս, ի Բիւզանդիոն,  
և յայնժամ հայ գրականութիւնն իւր ոս-  
կեղէն տաճարին ջահերը վասեց այն լու-  
սով զոր յունական կրթութեան կեդրոննե-  
ներէն բերած էին իւր գիտասէր զաւա-  
կունք: ի զուր Յուստիանոս փակեց Աթէն-  
քի գործոցներն: Միջին դարու սրատգամն  
եղաւ յոյն իմաստափրաց իշխանն՝ Արիս-  
տոտէլ, և Օւկանոնն Աստուածաշունչին  
հետ համարատիւ փայլեցաւ: Անմտհու-  
թեան համար ստեղծեալ լեզու, ամէն քա-  
ղաքական կործանումէ նա կը պրծնէր  
յաղթական. նա ո՛չ միայն անմահ էր, այլ  
և կը թուէր ստոնճնած լինել իմացական  
մեռելութեանց մէջ կենաց չեշտերն հնչե-  
ցնելու պաշտօնն: Այսպէս, յետ Միջին գա-  
րու տասնդարեան մեռելական քնոյն, Եւ-  
րոպա կը վերածնէր յոյն հնութեան բար-  
բառներուն ի լուր: Եւրոպա կը յոյնանար,  
և նոր ժամանակը կը բացուէին: Յոյն լե-  
զուն իւր ծնդաց վրայ գիեցոյց ու գտա-  
տիարակեց եւրոպական լեզուներն ու գը-  
րականութիւնքն, և այսօր՝ եթէ քան  
զինքն սուաւել կը խօսուին գաղիերէնն  
ու անգղիերէնն, մի՛ խարուիք, յունարէնն  
է որ կը խօսի ի նոսա: Դեռ տուանց անոր  
չիք կրթութիւն կատարեալ: Այս լեզուին  
սոյն բացառիկ ու եզական դերն աչքի առ-  
ջեւ ունենալով, պէտք չէ՛ ուրեմն զար-  
մաննք որ նախնի յոյնք բարբառու և ան-  
լեզու կը կոչէին այն ազդերն որք չէին  
խօսեր զյունարէնն, որ քաղաքակրթու-  
թեան գերազանց լեզուն լինելու սահ-  
մանեալ էր: — իմացական կենաց լեզուն էր:

կենաց բանն ալ անով չքարոզուեցա՞ւ աշ-  
խարհիւ :

Թ. Յ. Պէրֆիլիս

— ՀՅ 38 —

## ՄԵՂԱՎՈՐԻ ԾԱՌԱԿԵՆԻ

Դ.

ՈՒՍՏՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ԵԽ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՐՏՈՅ

Պարտոյ ծանօթութիւնը կ'ազ-  
նուացուելէ, եւ կատարումը կը  
մեծաւնէ զմարդ :

Դասխարակի՞ն անկ է մանա-  
ւանդ հանելի բնծայել պարտոյ  
զգացումը մանկան, եւ խանդա-  
վուել զնա այդ զգացմամբ :

Ազնիւ Արմենակ,

Օրուան խնդիրն, առ մեզ, է ազգային  
տրոց խնդիրնորոյ մտաին հրատարակեցան  
զանազան յօդուածներ, Յօդուածագիրք, ա-  
մէնն ալ, կը խոստովանին թէ ուղղակի կեր-  
պով ազգային տուրք վճարող ազգայինք  
խիստ սակաւաթիւ են կ. Պօլսոյ մէջ,

Խնդիրն ընդարձակ չըջանի մէջ քննելով,  
կրնայինք սոսւգտապէս ըսել թէ գաւուացի  
ազգայինք Պօլսեցիներէն աւելի փոյթեւան-  
դըն չեն մասնակցելու այն տրոց որք կա-  
րեսոր են իրենց ազգային հաստատութեանց  
մաստակարարման համար :

Այս ընդհանուր անտարբերութեան պատ-  
ճառը գրչի մէկ հարուածով որոշել ու զայն  
բառնալ շատ դիւրին չժոռիր ինձ. իւրա-  
քանչիւր խորհող պէտք է քննէ զայն ըստ  
իւր տեսակէտի, և, աւելի բարւոք վիճակի  
մը ակնկալութեամբ, տուջարկէ կիրարկու-  
թիւնն այն միջոցներուն որք, կը հաւա-  
տայ թէ, են գործնական և կրնան մինել  
արդիւնաւոր :

Անկարեւոր չինիր ուրեմն, եթէ կրթա-  
կան տեսակէտով ալ հայեացք մը նետուի  
խնդրոյն վերայ. և որպէս զի մասնակի չի-  
նի այդ հայեացք՝ պէտք է քիչ մ' ուելի  
խնդրոյն խորը մտնել և փնտուել թէ Ա. որո՞նք  
են, առ մեզ, իւրաքանչիւր անհատի պար-  
երն իբրեւ ազգային եւ իբրեւ բաղացայի.  
Բ. Թէ ուսուցիչն ի՞նչպէս կարող է տպա-  
ւորել այդ պարտոյ զգացում իւր աշակեր-  
տաց սրտին մէջ :

\* \*

Ա. — Պարտքն է մարդկային ընկերու-  
թեան անկիւնաքարերէն մին. մարդիկ՝ ա-  
ռանց պարտուց ձանաշնան՝ կարող չլինէին  
թերեւ կազմել ընկերութիւն և հաստատուն  
հիմանց վերայ գնել զայն: Պարտուց որբա-  
զան կամերով ցանցակերալ միմեանց կա-  
պակցեալ, մարդիկ կը կազմեն ընկերու-  
թիւններ որոց իւրաքանչիւրը սահմանեալէ  
իւր աշխատութեան բաժինը նույիրել քա-  
ղաքակրթութեան գործոյն . այսինքն՝ մը-  
տաց մշակութեան, սրաի կրթութեան, եր-  
ջանկութեան աճման, տառապանաց նուազ-  
ման, Արդարութեան ու Գթութեան հա-  
մատիւու ծաւալման: Եւ ընկերութիւն մը  
այնքան աւելի լաւ ի գլուխ կը հանէ իւր  
այս աշխատութիւն որբան այդ ընկերու-  
թեան անդամք խորապէս ի միտ առած լի-  
նին թէ ի՞նչ են իրենց բազմապլիսի պարտ-  
քեր առ ընկերութիւնն որում կը վերաբե-  
րին, և առ երկիրն յորում կ'ապրին:

Եւ արդ ի՞նչ են մեր պարտքեր իրբեւ Հա  
և իրբեւ Օսմանցի:

Ի՞նչ պարտքեր որ ունիմք առ Ազգն, նոյն  
պարտքերն ունիմք գրեթէ առ Տէրութիւ-  
նըն:

1. Հնազանդութիւն Ազգային և Պետա-  
կան օրինաց,

2. Տուրք ազգային սնտուկին, և հարկ՝  
Տէրութեան գանձուն,

3. Քուէտարկել ազգային պաշտօնէից ընտ-  
րութեան համար, և քուէտարկել քաղաքա-  
յին ժողովաց ընտրութեան համար,

4. Ծառայել Ազգին, և ծառայել Տէրու-  
թեան:

Ամէն ոզշամիտ անձ ցաւ ի սիրտ կը տես-  
նէ թէ սոյն պարտուց զանցառութեամբ  
կամ մանաւանդ տգիտութեամբ, նոյն իսկ  
մեր օրով, ի՞նչ վրդովմունք կը ծագին, ի՞նչ  
հարուած կը կրէ երկրին քաղաքակրթու-  
թիւնը, ի՞նչ եպերելի արարք ի հանդէս  
կուգան, և հանրային ճշմարիտ շահուց ներ-  
հակ ո'րչափ ձգտումներ երեւան կ'ելնեն:  
իւրաւանց պահանջմամբ միայն չգոյանար  
ներդաշնակութիւնն ընկերութեան մէջ .  
ներդաշնակութիւնն՝ համապատասխան պար-  
տուց և իրաւանց համերաշխ լծորդութեան  
մէջ է:

Այս պարտուց բնութիւնն այնպէս է,  
ստկայն, որ գիւրութեամբ չեն ըսմոնուիր  
կամ ընդունուիր ամէն մտքերէ, եթէ յա-

տուկ խնամով չըրացատրուին , չուսուցուին . և ասո՛ր համար է ահա որ , ի՞չպէս ըստեւ ցաւ , հազուագիւտ են առ մեղ վերոյիշեալ պարտուց սիրայօժար կատարողք : Ընկերական որոշ կազմակերպութեան մը ծնունդ են այս պարտքեր զորս կիրելու և կատարելու համար չբաւեր միայն մերթ ընդ մերթ ընթեռնուլ՝ լրագրաց մէջ՝ յօդուածներ պարտաճանաչութեան վերայ , կամ լըսել քարող եկեղեցւոյ բեմէն , և կամ տեսնել պաշտօնական յայտարարութիւններ պատերու վերայ . — ո՛չ , սոքա չեն կարող լիովին հասու ընել զմարդ ընկերային մեքենային այլ և այլ մասանց յօրինուածոյն ու գործողութեանց , նոցա առ միմեանս ունեցած սերտ առընչութեանց , և այն պայմանաց որք անհրաժեշտ են նոցա համերաշխ բարւոքման ու բարգաւաճման . ինչ որ միայն կրնան ընել այն է թէ առ ժամանակեայ յոյզ մը կ'արթնցունեն ի մեզ , վայրկեան մը խորհել կուտան մեզ մեր զանցառութեանց վերայ , լաւագոյն որոշումներ կազմել կուտան մեզ , և վերջ ի վերջոյ ո . չինչ կ'արտադքեն , ու իրաց վիճակին անփոփոխ կը միայ՝ ինչպէս ներկային նոյնպէս և ապագային մէջ :

Բայց ապագայն մանկութիւնն է , պատանեկութիւնն է , ուսանող սերունդն է . ուստի կազմե՛մք զնա այնպէս որ զգայ թէ անձնիւր մարդ՝ առանձինն չուառ էակ՝ ընկերութեան մէջ յարաժամ կը լցուի նորաբարիքով զորս առանց փոխարինութեան վայելելն է վատութիւն . թէ հաւաքական այդ բարեաց ի նպաստ՝ իւրաքանչիւր մարդը բան մ'ունի ընելու , բան մ'ունի տալու . թէ ի՞նչպէս կրնամք հասնիլ այդ նպատակին պիտի կազմէ Բ . մասն այս նամակիս :

Բ . Բնութեան երևոյթներն , օրէնքներն , օրինաց կիրարկութիւններն մասնաւոր գիտութիւններով սկսած եմք այսօր բազում ուրեք ուսուցանել նոյն խակ նախնական վարժարանաց մէջ , եթէ ոչ գործնականապէս՝ գէթ տեսականապէս առ հասարակ հասկցած լինելով թէ բնութիւնն ունի կըրթիչ ոյժ , և թէ տիեզերական կարգին վերայ դոյզն ծանօթութիւն կը վսեմացունէ հողին , ու անշունչ առարկայից նկատմամբ խակ կ'ամոքէ մարդոց վարմունք :

Իսկ ընկերութեան կարգաց ու հաստատութեանց , նորա բարգաւաճման պայմա-

նաց վերայ ծանօթութիւն աւանդելու , ընկերային կենաց պահանջներն ուսուցանելու , առ Ընկերութիւնն յարգանք , սէր ու անձնուիրութիւն ներշնչելու համար ի՞նչ միջոցներ ի գործ կը գնեմք :

Սու այս ի վաղուց անտի ընդունուած միջոցն է պատմութեան ուսումն որ , սակայն , չպիտի ծառայէ իւր նպատակին ցորչափ թաւի յատուկ անուանց , պատերազմներու և թուականներու վերայ միայն ընկերութեան անդամագնուրիւնը , բնախօսուրիւնը ու բարեցուրիւնը , կամ լաւ ևս , քաղաքակըրթութիւնը մանաւանդ պէտք է լինի առարկաց սոյն ուսման , որ յայնժամ և յանժամ և եթ կարող պիտի լինի՝ ընկերային բազմակնծիռ երևութից գիտողութեամբ՝ ուրուել , ի վեր հանել հիմնական օրէնքներ իրը առաջնորդ ընկերութեանց , և իմաստուն խրատներ՝ իրը կանոն մարդկային վարուց :

Իրը երկրորդ միջոց՝ որոյ կիրարկութիւնը գեւ նոր մուտ կը գտնէ մեր կրթութեան մէջ՝ է քաղաքական ծնուեսութիւնն . սա՝ խելամուտ ընելով զմեզ ընկերութեան գործառնութեանց , յարաբերութեանց ու բարեաց՝ մեր եսասիրիի սառն պատեանը կը լուծէ , կը հալեցունէ իւր մարդասիրական կենսատու չնչոյն տակ . թիւր նախապաշարումներ յրելով , նախանձու ամէն կիրք կը մարէ և համերաշխութեան ոգին կը տպաւորէ ի մեզ : Պաշտօնական ծրագրոյ մէջ մտած է արդէն այս գիտութիւն , եւ փակագելի է որ ծաւալի նաև ամէն ազգային վարժարանաց մէջ՝ ի ձեռն յարմարագոյն դասագրոց և կարողագոյն ուսուցչաց :

Կայ երրորդ ուսումն մը՝ որ քոյր առաջնոց և ծնունդ մեր ժամանակի պահանջմանց՝ աւելի գերազանց կերպիւ կը պատրաստէ մանուկն ապրելու ազգայնոյ ու քաղաքացւոյ ճշմարիտ կենօք , կը համարեն զայն մասն ընկերային բարոյագիտութեան , և իրը այդ՝ կ'ուսուցուի արդէն Ամերիկեան ու Եւրոպական նախնական վարժարանաց մէջ . այս ուսումն կը կոչուի ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ (Instruction civique) որ կ'աւանդէ նախ հիմնական գիտելիք ընկերային կազմակերպութեան վերայ ընդհանրապէս , երկրորդ՝ կուտայ տարրական ծանօթութիւն երկրին վարչութեան և ամենէ գործածական օրինաց վերայ :

Եթէ ինձ յանձնուէր Քաղաքային կը թութեան դաս տալ աշակերտացս, կ'ընտրէի նախ թաղին դպրոցն ընտանի լեզուաւ կը խօսակցէի աշակերտաց հետ դպրոցը կազմող տարերաց վերայ, զայն վարող մարմնոյն և վարչութեան կերպին վերայ, մաստակարարութեան վերայ զգալի կ'ընէի նոցա թէ դպրոցն առանձին սեպհակականութիւնմը չէ, այլ հանրային հաստատութիւն մը. համառօտիւ կը յիշէի դպրոցին պատմութիւնը, բարերաց կենսագրութիւնը կ'ընէի, թաղեցոց առ նա տածած զգացումները կը բացատրէի, հոգաբարձութեան անվարծ աշխատութիւնը կը գովէի՝ եթէ արժանի է գովութեան, յառաջ կը բերէի մի տո մի այն առաւելութիւններ զորս թաղեցիք կը վայելեն հաւաքարար կրթել տալով իրենց զաւակներ, և լն, և լն:

Յետոյ միւնյոյն կերպով կը խօսակցէի եկեղեցւոյ վերայ: Ուրիշ դասի մը նիւթ կ'ընէի թաղ. Խորհրդոյ ընտրութեան եղանակը. կը նկարագրէի քուէ արկութեան առաւոտ մը, յետ ժամերգութեան. շարժում, ոգեւորութիւն Խորհրդարանին չուրջն ու թաղին մէջ. կը բացատրէի թէ ի՞նչ է քըւէն և ի նչ արժէք ունի. կը յորդորէի աշակերտաներս որ երբ ընտրող լինին մի օր, մեղրամնի պէս ճնկին ամէն խօսդի առջեւ, լաւ Խորհրդին, լաւ ընտրեն, և իրենց քուէն տան միայն. ի մէջ կը բերէի ընտրող և ընտրելի լինելու պայմանները, և լն: Այս դասեր սկիզբ մը կը լինէին Սահմանադրութեան ուսմանն. հետզետէ ընդլայնելով ոյն ծանօթութեանց շրջանակն՝ կ'ուսուցանի Սահմանադրական վարչութեան այլ և այլ ճիւղերն: կը խօսէի, ըստ տեղեցն, ազգային բարեւիրական հաստատութեանց վերայ, եկեղեցական կարգաց ու կանոնաց վերայ, Պատրիարքութեանց ու Կաթուղիկոսութեանց բնութիւնը կը բացատրէի, ուխտագնացութեանց պատմութիւններ կ'ընէի: Բեղջուն նիւթեր պարտուց սէր ներշնչելու, ընկերական ոգին զօրացնելու:

Վերոյիշեալ դասուց համընթաց՝ ազգային շրջանէն դուրս՝ կը ծանօթացունէի աշակերտաներս քաղաքային շրջանակաց, գիւղի, գիւղախմբի, քաղաքի, և լն վարչութեան եղանակաց բոլորովին անտեղեակ չեն տղայք. իրենց ծանօթ են արդէն շատերն քաղաքային պաշտօնեայներէն — դիւղա-

պետ, քաղաքապետ, դատաւոր, ոստիկան, կառավարիչ, հարկահաւաք, և լն, — ասոնցմէ մին կամ միւսն ընտրելով իրը չու կէտ՝ կը ճշգէի, կ'ընդարձակէի աշակերտաց գաղափարները. ոստիկանը, զորօրինակ, առիթ կուտար ինձ մի քանի տեղեկութիւն հաղորդել պատժական օրինաց վերայ, հարկահաւաքն պատճառ մը կը լինէր հարկի վերայ խօսելու, և անոր բանաւորութիւնն հասկցունելու: Քաղաքաց մէջ նախաքննիչ ատենից ու Քաղաքային խորհրդոց կազմութեան եղանակն ո'րչափ քաղադէպ կը լինէր բացատրելու հաւասարութեան ոգին որ կը տիրէ ընդհանրապէս մեր երկրի օրինաց մէջ: Այս ամէն խօսակցութեանց միջոցին խիստ գիւրին պիտի լինէր ցոյց տալ կառավարութիւնն իրեւ բարեկամ հասարակաց ապահովութեան, և թուել մեր համապատասխան պարտքերն ի փոխարէն այն ծառայութեանց զորս կ'ընդունիմք կառավարութենէն:

Առաջին տարիներուն մէջ՝ առանց ո և է դասագրքի՝ մասնաւոր ծրագրով մը միայն կարելի է աւանդել այս ծանօթութիւններ. լաւագոյն է, սակայն, որ ընթերցանութեան դասագրքին մէջ սփուռած լինին ամփոփ ու յստակ: Բարձրագոյն տարիներուն համար պէտք է դասագիրք, բայց ոչ թէ ի բերան ուսանելու համար դասերն, այլ կարգալու և ամիսովումն ընելով ի միտ առնելու համար:

Դասերէն դուրս երեմն աշակերտներն այցելութեան հանել հասարակաց շէնքերու բարեսիրական հաստատութեանց, ականատես ընել զանոնք օրինական գործողութեանց՝ կը նպաստեն աւանդեալ դասուց տալու աւելի հաստատութիւն: Իսկ դասու այցելութիւն, ամենեքին, միահաղոյն կը դասունան զօրաւոր լծակ մը հոգւոյ բարձրացման, և աղարտուց կատարման, արժանապատութեան սկահանման՝ իրեւ Հայ և իրեւ Օսմանցի:

Ուրեմն եթէ՝ Քաղաք, տնտեսութեան ու պատմութեան դասուց հետ՝ սկսինք Քաղաքային կրթութեան գէթ տարերքը կանոնաւորապէս աւանդել մեր վարժարանաց մէջ՝ մէծ դարկ մը տուած կը լինիմք մեր ազգային ու քաղաքային կենաց ոգեւորութեան ու բարւոքման, և, հիմնական բարւոքման:

Ազնիւ Արմենակ, եթէ հաճոյ ու բանաւոր կը թուին քեզ գաղափարներս, ի փորձ դիր առաջարկած միջոց — Քաղաքային կրթութեան ուսումը — վարժարանին մէջ, որոյ տեսչութիւնը կը վարես:

Վաստակ եմ թէ աշակերտաք անհամբերութեամբ պիտ' սպասեն դասախոսութեանցդ ժամերուն, խնդութեամբ պիտի ողջունեն զքեզ, և դու՝ նոցա եռանդեանն ի տես՝ դժուարաւ պիտի թողուս դասարանն երբ զանգակն հնչէ:

Արիութիւն և յաջողութիւն կը մազթէ քեզ

Քոյդ

Գ. Ա. ՄՈԼՈԹԵԱՆ

## ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Լաւ գրելու համար կարեւոր է մասց ընդհանուր զարգացումն յառաջ բան զամէն մասնաւոր պատրաստորին:

Ամէն բան ուրեմն դարձեալյայս կը յանդիայն է սովորեցնել միտքը խորհրդածելու, անդուլ խորհելու, թափանցողութիւն տալու անոր, այնպէս որ որ բնաւ բան մ' անոր համար նշանակութենէ զուրկ չ' երևի, այնպէս որ ամէն ինչ որ կը նշմարէ՝ գաղափար մ' արթնցնէ նորա մէջ, այնպէս որ իւր գաղափարք մի յարատեւ շարժման մէջ լինին, փոխանակ մնալու յիշողութեան մի անկեան մէջ, ննջելու համար անդ նման դիւնապանց փոշիներուն մէջ մնացած հին թղթերու, և իրերաց բաղնուին, լըծորդին, միաւորին, բազմապատկին իւրեանց մշտաշրժ գործունէութեամբ, ու նորոգին նորանոր տպաւորութեանց հաղորդակցութեամբ, ընդարձակին, ընդունին բարեփոխումներ:

Առ այս պիտոյ են հաստատուն կամք, անընդհատ ուշադրութիւն, յամաս խորհրդածութիւն, բայց ժամանակաւ ու սովորութեամբ, ճիգը կ'անհետի, գաղափարք կը մնան մոտաց մէջ կենդանի, գործօն, արդիւնաւէտ և բեղուն: Ո՛չ ինչ կը կորսուի անդ, ամէն ինչ կը բաղբոջի: Եթէ ուշադիր եղած է մարդ գիտելու ինչ որ տեղի ունի իւր մէջ և իրմէ գուրս, եթէ փորձած է իւր կրած յոյզերը նշանակել, ըմբռնել նոցա պատճառքն, արդիւնքն, երանգներն ու աստիճաններն, զգայնու-

թեան և խմացականութեան մէջտեղ երթալով հաղորդակցութիւնն պիտի լինի աւելի սերտ, զգացմունք պիտի ածեցնեն գաղափարներն, միտքն պիտի նրբացնէ սիրտը, և զգացման փափկութեան հետ պիտի ածիդատողութեան կորովն: Յայնժամ մարդ պիտի կարենայ լու գրել, և պիտի գրէ շատ բնական կերպով, առանց հոգն ընելու հրետորական կանոններն: Բաւական պիտի լինին ինչ ինչ յօյժ պարզ քաջայաց խրատներ ոճն յզկելու համար: Երբ միտքն բարով կ'ըմբռնէ, երբ սիրտն լաւ կ'զքայ, երբ յիշողութեան ծոյլ բոնակալութենէն զերծած է մարդ, երբեք գէշ չի գրեր, եւ շատ մօտ է լու գրելու:

Գրելու արուեստն կը սովորուի ուրեմն միեւնոյն ատեն որ մարդ կը սովորի գրագիտութիւն, պատմութիւն, գիտութիւններն, այնու խսկ որ կը սովորի զայն, միեւնոյն ատեն որ մարդ տակաւ կը յառաջանայ կենաց մէջ, այնու խսկ որ նա կ'ասրի: Աւսումնասիրութիւն և փորձառութիւն գիւտի և ոճոյ ճշմարիտ աղբիւրներն են: Եթէ մարդ լաւ ուսած է, եթէ լաւ ապրած է, այսինքն իբրև գործօն և իւր անձին գիտակից էակ, բոլոր իւր հմտութիւնքըն և նախսկին յոյզերն անզգալի կերպիւրենց մասնակցութիւնը սիրտի ունենան իւր գրածներուն մէջ, եւ թէսլէտ ի նոցանէ և ո՛չ միոյն հետքն կարելի է ճըշդիւր յուցնել, նոքա պիտի խառնուին մեր բոլոր խորհրդոց և խօսից մէջ, ինչպէս որ չէ կարելի ըսել թէ մարմասնարգի ո՞ր դասըն կամ ո՞ր սնունդն ի մէջ ամենուն տըւաւ մարմնոյն՝ այն զօրութիւնն զոր ի հանգէս կը բերէ նա մի օր ի հարկին:

Նախմին տպաւորութեանց այս ճոխութիւնն է որ այնքան բնականութիւն և լըգում դրած է ծիկին աը Սէվինիէի նամակաց մէջ: Զկայ անոնց մէջ հատ մի յորում կին ընթերցմունք, անցեալ խօսակցութիւնք և ներքին ներանձնական խորհրդածութիւնք ներկայ զգացման չբերեն իւրեանց գործակցութիւն: Եթէ արագագիր գրչաւ կը գրէ էջ մ' որ գլուխ գործոց մ' է, պատճառն այն է զի իւր բովանդակ կենաց ընթացքին մէջ կարդացած, խորհրդած, խօսակցած էր, զի իւր միշտ գործօն խմացականութեան մէջ՝ զգացմունք, գաղափարք անդադար ըրջան կ'ընէին,

ինչպէս արիւնն իւր մարմնոյն մէջ եւ կը տածէին անդ կեանքը, զի իւր բովանդակ հոգին միշտ յոտին կանդուն էր, պատրաստ ի սպաս, և մէն մի բառ, մէն մի խօսք իւր իմացական և բարոյական ամբողջ կենաց արգասիքն ու արտայայտութիւնն էր:

Մի՛ կարծէք թէ դիւցաբանութիւն գիտնալ եւ թասսոյի դիւցազներգութիւնը ձանչնալ բաւական եղած են իրեն գրելու համար իւր տապալեալ ծառոց վերայ այն համբաւաւոր ողբն. դպրոցականի յիշողութիւն մի զգացման վերայ իմաստակութեան ստուեր մի սիտի նետէր, և ամէն դեղեցկութիւն սիտի եղծուէր: Այլ պէտք եղած է բանաստեղծութեամբ տոգորեալ միտք մը դիւրագրգիռ և իւր տալաւորութիւնքն այլակերպելու երագափոյթ երեւակայութիւն մը, և, առաւել քան զամենայն, փափուկ հոգիներու այն ամօթշեածութիւնն որ սրտին յուզումն ժալիսով մի կ'սքօղէ և իրականութեան կարի սըրտաճմիկ բացատրութիւնն քմահաճոյ ձեկի մը տաք կ'ամոքէ:

Լուվուայի մահուան վրայ վեց տող գըրելու համար չափազանց չէ եղած լսած լինել զՊօսիւէ և զՊուրտալու, խորհրդածած լինել բասքալայ և սուրբ Օգոստինոսի խօսքերուն վրայ, բայց, այսպէս պատրաստեալ, Տիկին աը Սէվինիէ կարողացաւ տեսնել Աստուծոյ այն անողոք ձեռքն որ կը կործանէր զլուվուա և նորա մեծութիւնն, ըսել զայս պարզ ի պարզոյ, և իւր ըսածն պարզապէս վսեմ է:

Կրնաք միրել դուք ձեր ծերունի պարտիզանն, առանց կարող լինելու ըսել սապարզ բառերն, «Պօլս աղբար մեռաւ, մեր պարտէզն բոլորովին տխուր է այս մահուամբ»:

Այլ նրբազգած և իմաստասիրական հոգի մի որ զգացած լինի այն հրապոյրն զոր մարդուն ներկայութիւնն կուտայ անշունչ իրաց, որ զգացած լինի թէ քանի կակծալի է բնութեան անտարբեր պայծառութիւնն, երբ կ'աներևութանայ այս բարի մարդուկն որ կ'երթար, կուգար, կը բերէր, կը յատանէր, շարժումն, զոնազանութիւն, կեանք դնելով, ինքն առանձին լեցնելով այս անապատն, հոգի այս փոքր աշխարհին, հեթանոս բանաստեղծութեամբ թըրծուած երևակայութիւն մի, որ բացատրէ

այս անզգայութեան խոկ տիրութիւնն, եւ, ծերուկ պարտիզանին համար՝ սգոյ մէջ նատեցնէ մշտագեղ և մշտաժմիտ ծաղկունքըն, սոքա միացն կարող են թելադրել այն համառօտ խօսքն, ուր Հոմերի և Վիրդիլեայ մի արձագանգն կը լսուի:

Ոճոյ բացատրիչ յորդութիւնն բնական արգասիքն է բարդեալ տպաւորութեանց կոյտի մի նրբիմաստ, յուզեալ, նկարագեղ, վսեմ ասացուածն կը ծլի ու կը փթթի անջան բարոյական կենաց ձոխ գետնին վերայ, արտաքին երկարածգումն և վերջին եղբն է այն՝ ներքին զգացումներու եւ անձառ դաղափարներու մի երկար շղթայի:

իւսկիւտար Փ. ՀԱՆԽՈՆ  
Պէրգ. Վարժբն. Խրամ ի վերայ առուեսի գրելոյ  
(Թարգ).  
Ա. ՓԱՇԱԽԵԱՆ

\*\*\*\*\*

#### ՄՏԱՄԱՐԶԱԿԱԿԱՆ

Տխո՞ւր աղօրէպան որոյ երկանաքարին ձռնչիւնը միշտ կը լսեմք և ալիւրը երբեք չեմք տեսներ:

#### ՄԵԿՆԱՒԹԻՒՆ

Այս այլաբանական խօսքը երեք տեսակ անձանց կրնայ պատշաճիլ. 1<sup>0</sup>. նոցա որք շատ խոստանան եւ չեն կատարեր իւրեանց խոստումը : 2<sup>0</sup>. նոցա որք շատ աղմուկ կը հանեն եւ սակաւ արդիւնք ունին. 3<sup>0</sup>. նոցա որք շատ կը պարծին եւ սակաւ կ'արժեն:

\*\*\*\*\*

#### ՎՐԻՊԱԿՔ ԺԵ. ԹՈՒՈՅՆ ՄԷՋ

Էջ Սիւնակ Տող Վրիպակ Ուղիղ  
225 Ա. 7 հարիւր աստիճան կարմիր  
աստիճան

|   |   |            |         |
|---|---|------------|---------|
| « | « | 22 մարդը   | սարդը   |
| « | « | 35 ա՞յնքան | ա'յնքան |
| « | « | 46 1 1/0   | 1/10    |

#### ԱՐՏՈՒՐԱԿ Ա. ՍԱԲԱՅԵԱՆ

Տնօրէն-խմբակիր  
ՄԻՀՐԱՑ ԱՍԳԱՆԱՋ

Տպագր. ՆՇԱՆ Կ. Պէրտէրեան  
Կ. Պօլս, Էսկի Զապրիկ ճատկասի, 64.